Ռուսաստանն ակնկալում է իր հայ գործընկերների ակտիվ ներգրավվածությունը Եվրասիական մայրցամաքում հավասար և անբաժանելի անվտանգության համակարգի զարգացման համատեղ ջանքերում: Այս մասին «Известия»-ին ասել է Հայաստանում ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկինը: «Խոսելով Հայաստանի անվտանգության ապահովման խնդիրների մասին՝ մենք հավատարիմ ենք այն դիրքորոշմանը, որ ռուս-հայկական դաշնակցային համագործակցությանը համեմատելի իրական այլընտրանքներ չկան, այդ թվում՝ ՀԱՊԿ շրջանակում: Ռուսաստանը հավատարիմ է մնում իր պարտավորություններին՝ ապահովելու Հայաստանի անվտանգությունն ինչպես երկկողմ ձևաչափով, այնպես էլ ՀԱՊԿ-ի միջոցով», – ասել է դիվանագետը (25.11.2024 թ.):

**Հինգշաբթի**
**28 նոյեմբերի 2024թ.**
**№ 21 (630)**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

*Ու որպեսզի այդ թամաշավոր-ժողովրդի սիրտը շահած լինեն ու բարեկամ պահած, միշտ գոռում են «ժողովրդի» անունը:*

*ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ*



## Աշխարհում կա մեկ և անկրկնելի Արևմտյան Ադրբեջան, դա Իրանի Արևմտյան Ադրբեջան նահանգն է

«Միակն ու անկրկնելին». Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դըկոտինյին X-ի իր միկրոբլոգում նման գրառում է կատարել և կից հրապարակել է Իրանի Արևմտյան Ադրբեջան նահանգի քարտեզը: Այս գրառմամբ Ֆրանսիայի դեսպանն ազդանշան է ուղարկում Ադրբեջանին (և ոչ միայն), քանի որ վերջինս իր կեղծ, սուտ և հորինված «Արևմտյան Ադրբեջան» հասկացությամբ Հայաստանի Հանրապետության տարածքը համարում է իբր թե իրենը: **24.11.2024**

## Հայաստանում հայտարարվել է ձմեռային զորակոչ, կարող են մեկնել նաև կանայք

**2024 թվականի ձմեռային զորակոչը կանցկացվի նոյեմբերի 25-ից մինչև 2025 թվականի հունվարի 31-ը ներառյալ: Որոշումն ընդունվել է կառավարության նիստում:**

Նշվում է, որ այս ընթացքում պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայության կենթարկվեն արական սեռի այն քաղաքացիները, որոնց 18 տարին լրանում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը կամ որոնց տարկետման ժամկետը ավարտվում է նշված ժամկետում:

Որոշումը նախատեսում է զորակոչել նաև այն կանանց, ովքեր կամավոր հիմունքներով ցանկություն են հայտնել անցնելու շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն, ինչպես նաև օրենքով սահմանված հատուկ կարգավիճակ ունեցող արական սեռի քաղաքացիներին:

Պարտադիր զինվորական ծառայություն անցած քաղաքացիների զորացրումը կիրականացվի 2025 թվականի հունվարի 9-ից մինչև հունվարի 31-ը ներառյալ:

Նույն ժամկետում կզորացրվեն նաև այլընտրանքային ծառայություն անցած քաղաքացիները:

Զորակոչի կազմակերպման նպատակով ստեղծվելու են հանրապետական և մարզային զորակոչային հանձնաժողովներ, ինչպես նաև կենտրոնական բժշկական հանձնաժողով՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ:

**21.11.2024**

## Ադրբեջանում բարձրացնում են զորքերի մարտունակությունն ու զգոնությունը

Ադրբեջանի պաշտպանության նախարար Զաքիր Հասանովը բանակի անձնակազմին հանձնարարել է բարձր պահել զգոնությունն ու զորքի մարտունակությունը:

Այս մասին ասված է նոյեմբերի 23-ին նախարար Հասանովի գլխավորությամբ տեղի ունեցած ծառայողական խորհրդակցության մասին պաշտոնական հաղորդագրությունում:

**«Պաշտպանության նախարարը հանձնարարել է էլ ավելի բարձրացնել զորքի մարտունակությունը, ինչպես նաև ճիշտ կազմակերպել զինվորական հերթապահությունը»**, – նշված է հաղորդագրությունում:

Աղբյուրի համաձայն՝ նիստի ընթացքում **«վերլուծվել են ընթացիկ օպերատիվ պայմանները և հայ-ադրբեջանական պայմանական սահմանին զինվորական ծառայության կազմակերպումը»:**

**«Նշվել է ձմեռային սեզոնի միջոցառումներն ուժեղացնելու անհրաժեշտությունը, հատկապես լեռնային գոտիներում, կլիմայական ծանր պայմաններում գտնվող ստորաբաժանումներում»,** – հավելում է Ադրբեջանի ՊՆ-ի մամլո ծառայությունը:

**AZATUTYUN.AM**

## Իրանն ու Ռուսաստանը Կովկասում դաշնակիցներ չեն

Ռուսաստանն ու Իրանը Հարավային Կովկասում տարբերվող շահեր ունեն՝ New York Times-ին տված հարցազրույցում ասել է Հայաստանում Իրանի դեսպան Մեհդի Սոբհանին, մանրամասնելով՝ **«մենք որոշ տարաձայնություններ ունենք, և որոշ համընդհանուր շահեր: Դա չի նշանակում, որ մենք դաշնակից ենք»:**

**«Հակամարտություններով լի Կովկասում Ռուսաստանն ու Իրանը տարբերվող տեսակետներ ունեն առևտրային ճանապարհների ու ազդեցության բաժանման հարցում»,** – գրում է ամերիկյան պարբերականը, մանրամասնելով՝ դա արևմտյան երկրներին անսովոր երկընտրանքի առջև է կանգնեցնում:

Փաստելով, որ տարածաշրջանի ապագայի շուրջ լարվածության վերջին ալիքը Սյունիքի շուրջ է պտտվում, New York Times-ը գրում է՝ **«Այս պահին այդ ճանապարհն առանցքային նշանակություն ունի իրանական ապրանքները Պարսից ծոցից Ռուսաստան ու Եվրոպա հասցնելու համար: Այստեղ է, որ Ռուսաստանն ու Ադրբեջանն ուզում են արևելք-արևմուտք ճանապարհ բացել դեպի Թուրքիա, որը կլինի Հայաստանի վերահսկողությունից դուրս: Հայերը մտավախություն ունեն, որ այդ ճանապարհն Ադրբեջանը կվերցնի ուժով»**:

**«Մենք չենք կարող ընդունել միջազգային սահմանների փոփոխություն»**, – ամերիկյան պարբերականին տված եզակի հարցազրույցում ասել է Հայաստանում Իրանի դեսպանը:

Մեհդի Սոբհանին, միաժամանակ, խուսափել է հստակեցնել՝ ինչ կանի Թեհրանը, եթե Ադրբեջանը հարձակվի: **«Դա տեղի չի ունենա»,** – ասել է նա:

**15.11.2024**

## Այսպես կոչված Զանգեզուրի միջանցքը՝ Թուրքիայի և Ադրբեջանի գերխնդիր

Թուրքիան ակտիվորեն աշխատում է «Զանգեզուրով» առանձին երթուղի ստեղծելու ուղղությամբ՝ Ադրբեջանի հետ Միջին միջանցքով բեռնափոխադրումների իրականացման համար. այս մասին ասել է Թուրքիայի տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարար Աբդուլքադիր Ուրալօղլուն COP29-ում «Կայուն, թվային Միջին միջանցք և ոչ միայն» թեմայով նախարարական կլոր սեղանին:

Նրա խոսքով՝ Թուրքիան գտնվում է տրանսպորտային միջանցքների կենտրոնում և առանցքային դեր է խաղում միջմայրցամաքային միջանցքների արդյունավետ օգտագործման գործում:

**20.11.2024**

«Զանգեզուրի միջանցք»-ը նախագիծ է, որը Բաքուն դիտարկում է որպես շահավետ բոլոր կողմերի համար: Այս մասին ադրբեջանական լրատվամիջոցներին ասել է Ադրբեջանի նախագահի հատուկ հանձնարարությունների գծով ներկայացուցիչ Էլչին Ամիրբեկովը:

**«Ադրբեջանի համար այդ միջանցքը կարևոր է, որովհետև այն կապ կապահովի երկրի հիմնական մասի և Նախիջևանի միջև: Հայաստանն իր հերթին հնարավորություն կստանա վերջ տալ տարածաշրջանում մեկուսացմանը: Թուրքիան աջակցում է միջանցքի բացմանը, Ռուսաստանը ևս իր շահագրգռվածությունն է հայտնել: Միջանցքի բացումը նաև Իրանի շահերից է բխում»,**– ասել է Ամիրբեկովը:

Նրա խոսքով՝ «Զանգեզուրի միջանցք»-ը նաև Ասիան Եվրոպային կապող այլընտրանքային երթուղի է, ուստի այն կարևոր նշանակություն ունի նաև տարածաշրջանի մյուս երկրների համար:

**19.11.2024**

Ադրբեջանի և Հայաստանի միջև տրանսպորտային հաղորդակցությունների բացումը նոր թեմա չէ: Ադրբեջանում կառուցվում է տրանսպորտային կապի ենթակառուցվածք, որը շուտով կհասցվի Հայաստանի հետ սահման, այս մասին ասել է Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովը:

Նա նշել է, որ 2020 թվականի եռակողմ հայտարարությունում հատուկ կետ կա դրա վերաբերյալ.**«Դրանում հստակեցված են այն պարտավորությունները, որոնք Հայաստանը ստանձնում է: Այս թեման երկար ժամանակ քննարկվել է: 3,5 տարվա քննարկումներից հետո «ձեռք է բերվել պայմանավորվածություն» արտահայտությունը համարում ենք ուշացած: Այս պայմանավորվածությունը պետք է վաղուց ձեռք բերված լիներ: Եթե այս հարցի վերաբերյալ դեռ պաշտոնական փաստաթուղթ չկա, եթե Հայաստանն այս ուղղությամբ աշխատանքներ չի սկսել, ուրեմն դեռ բաց հարցեր կան: Իսկ Ադրբեջանի տարածքում երկար ժամանակ արագ տեմպերով աշխատանքներ են տարվում տրանսպորտային կապի ենթակառուցվածքի ստեղծման ուղղությամբ, որը շուտով կհասցվի Հայաստանի հետ սահման»,**– ասել է նա:

Նա հավելել է, որ ներկայումս ադրբեջանական կողմի ուշադրությունը կենտրոնացած է COP29-ի վրա, և հայկական կողմի հետ հանդիպումը խաղաղության պայմանագրի նախագիծը քննարկելու համար մինչև դեկտեմբեր անհնար է: Բայրամովի խոսքով՝ նման հանդիպում կարող է լինել դեկտեմբերին կամ հունվարին, սակայն կոնկրետ պայմանավորվածություն այս հարցում դեռ չկա:

**15.11.2024**

# Օկուպացված Արցախի «Մենք ենք մեր սարերը» հուշարձանը վանդալիզմի է ենթարկվել. ահազանգ

Monument Watch-ը ահազանգում է. 2024 թվականի նոյեմբերի 8-ին ադրբեջանական թելեգրամ ալիքները սկսեցին տարածել օկուպացված Ստեփանակերտում գտնվող ‹‹Մենք ենք մեր սարերը›› հուշարձանի լուսանկարները, տեսանյութերը:

Տեսանյութերից երևում է, որ հուշարձանի ետնամասը պատված է մեծաքանակ գրություններով՝ հիմնականում հուշարձան այցելած ադրբեջանցիների անուններ, ազգանուններ, բնակավայրերը ցուցող տեղանուններ, հայերին և Հայաստանը ծաղրող գրառումներ (https://t.me/bez_tor/56684): Տեսանյութերից երևում է, որ հուշարձանի շրջակա տարածքը վնասված է: Միևնույն ժամանակ նկատելի է, որ ադրբեջանական քարոզչամեքենան նոր թեզ է առաջ քաշում, որ թեպետ հուշարձանը կառուցված է խորհրդային տարիներին ադրբեջանական գումարներով, սակայն այն ‹‹դարձել է հայկական անջատողականության խորհրդանիշ››, ուստի պետք է ապամոնտաժվի:

Կարող ենք հավաստել, որ ադրբեջանական իշխանությունը չի արգելում Ստեփանակերտ այցելող իր բնակիչներին՝ տարբեր գրություններով պատել հուշարձանը, ինչպես նաև կրկին խրախուսում է հուշարձանը քանդելուն ուղղված քննարկումները:

***

«Մենք ենք մեր սարերը» հուշարձանի հետ կատարված վանդալիզմի և պղծման գործողություններն արգելված են Հաագայի 1954 թ. Զինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիայի 4-րդ հոդվածով. **«Պետությունները պարտավոր են հարգել ինչպես իրենց, այնպես էլ մյուս կողմի տարածքում գտնվող մշակութային արժեքները՝ զերծ մնալով թշնամանքի, պղծման, ոչնչացման և հաշվեհարդարի գործողություններից»** (Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict. The Hague, 14 May 1954, article 4):

Եվրոպայի խորհրդի «Ճարտարապետական ժառանգության մասին» կոնվենցիան, որին 2010 թվականից անդամակցում է նաև Ադրբեջանը՝ պարտավորեցնում է պաշտպանել ու պահպանել աշխարհի ճարտարապետական ժառանգությունը (Full list - Treaty Office (coe.int)), իր 4-րդ հոդվածով կողմերից պահանջում է խուսափել ճարտարապետական ժառանգության արժեքներն աղավաղելուց կամ քանդելուց:

Հայկական հուշարձանների պղծումն արգելել է նաև Հաագայի Արդարադատության միջազգային դատարանն իր 2021 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ: Համաձայն վերջինիս, Ադրբեջանը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու և պատժելու վանդալիզմի ու պղծման գործողությունները հայկական մշակութային ժառանգության դեմ՝ ներառելով, բայց և չսահմանափակվելով եկեղեցիներով և պաշտամունքի այլ վայրերով, հուշարձաններով, տեսարժան վայրերով, գերեզմանատներով և արտեֆակտներով (International Court of Justice, Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan), 7 December 2021, No. 2021/34):

Բացի այդ, Եվրոպական խորհրդարանը 2024 թվականի մարտի 12-ին ընդունել է ԵՄ-ի և Հայաստանի միջև ավելի սերտ կապերի, Ադրբեջանի և Հայաստանի միջև խաղաղության համաձայնագրի անհրաժեշտության մասին բանաձևը, որն իր 19-րդ կետով դատապարտում է հայկական բազմադարյա ներկայությունը փաստող բոլոր պատմամշակութային վայրերի ոչնչացման, վանդալիզմի և պղծման դեպքերը:

2024 թվականի հունվարի 17-ի Ֆրանսիայի սենատի բանաձևը նույնպես դատապարտել է Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության ոչնչացման Ադրբեջանի քաղաքականությունը (http://surl.li/krjwuh):

Իսկ 2024 թվականի փետրվարի 28-ին Եվրոպական խորհրդարանի «Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության իրականացման վերաբերյալ 2023 թվականի հաշվետվությունը» իր 77-րդ կետով պահանջում է պաշտպանել հայկական մշակութային ժառանգությունը Լեռնային Ղարաբաղում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի չափանիշներին և Ադրբեջանի միջազգային պարտավորություններին համապատասխան (http://surl.li/vbwidl):

**12.11.2024**

# Ադրբեջանը քանդում է Ստեփանակերտի թաղամասերը

**Այն երկրներն ու միջազգային կառույցները, որոնք հայտարարում են արցախցիների խաթարված իրավունքների վերականգնման, այդ թվում՝ Արցախ վերադարձի անհրաժեշտության մասին, խնդրին սրտացավ ու անկեղծ մոտենալու դեպքում խիստ ուշադրության կենտրոնում կպահեին Ստեփանակերտն ավիրելու խնդիրը. այս մասին գրել է ԱԺ պատգամավոր Տիգրան Աբրահամյանը:**

*Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին եկեղեցին*

**«Տևական ժամանակ է՝ ինչ Ադրբեջանը քանդում է Ստեփանակերտի թաղամասերը, ոչնչացնում, անարգում ոչ միայն Արցախի պատմամշակութային կոթողներն ու սրբավայրերը, այլ մարդկանց ունեցվածքը:**

**Միջազգային կառույցները որպես կանոն արձագանքում են Արցախի հոգևոր արժեքների ոչնչացմանը, բայց այդ հայտարարությունները որևէ լուրջ հետևանք չեն ունենում:**

**Եթե աշխարհաքաղաքական դերակատարների մոտեցումներում Արցախի հարցը զուտ շահարկումների և Ադրբեջանի վրա ազդելու ճնշման միջոց չէ, ապա դրա հետ կապված արձագանքը պետք է լինի կոշտ և զսպող»,**– գրել է նա:

**20.11.2024**

# Ջրային պատերազմը սկսված է. Հայաստանը պետք է ճիշտ կառավարի իր ջրային ռեսուրսները

**Ովքե՞ր են ադրբեջանցի մասնագետների հետ աշխատող հայ հիդրոլոգներն ու ինժեներները: Շրջակա միջավայրի նախարարությունը փորձում է հասկանալ, թե համատեղ ինչ խմբի մասին է խոսել Ադրբեջանում ԱՄՆ դեսպանը:**

Վերջինս սոցցանցային գրառմամբ տեղեկացրել էր, որ Ադրբեջանի և Հայաստանի հիդրոլոգների ու ինժեներների խումբը ԱՄՆ-ի ակտիվ աջակցությամբ անդրսահմանային գետերի ջրային ռեսուրսների կառավարման համալիր սխեմա է մշակում: Մինչ Երևանում կհասկանան, թե ինչ աշխատանքի մասին է խոսքը, հայ մասնագետներն ընդգծում են՝ ջրային պատերազմը սկսված է, Հայաստանը պետք է կարողանա ճիշտ կառավարել իր ռեսուրսները:

Շրջակա միջավայրի նախարարությունից «Ռադիոլուրին» փոխանցում են՝ այս պահին Հայաստանի ու Ադրբեջանի հիդրոլոգների համագործակցություն կամ միասին իրականացվող որևէ ծրագիր չկա: Նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետները ներգրավված չեն նման աշխատանքներում: Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Մարկ Լիբինն էր X–ի էջում գրել:

**«Ադրբեջանի և Հայաստանի հիդրոլոգների և ինժեներների խումբը ԱՄՆ-ի ակտիվ աջակցությամբ անդրսահմանային գետերի ջրային ռեսուրսների կառավարման համալիր սխեմա է մշակում»:**

Հայաստանի շրջակա միջավայրի նախարարությունը միջազգային գործընկերներին

*Արփա գետը*

օրինակ, պետք է փոքր ջրամբարներ կառուցել :

Զաքարյանի փոխանցմամբ՝ Հայաստանի ջրային ռեսուրսները հիմնականում ձևավորվում են մեր երկրի տարածքում, և Հայաստանը կարող է պահել ու օգտագործել դրանք: Ջրային ռեսուրսների պահպանման ու կառավարման պլանը գրվում է վեց տարին մեկ: Գնահատվում են ավազանի վիճակը, ռիսկերը, վերլուծվում է, թե այն որքան պետք է պահպանվի: Որոտանն ու Ողջին՝ Սյունիքում,

*Որոտան գետը*

հարցումներ կուղարկի՝ պարզելու հայտարարության հիմքերը: Հայաստանում ԱՄՆ դեսպանատնից չեն մեկնաբանում, հորդորում են հարցերն ուղղել Ադրբեջանում ԱՄՆ դեսպանատուն:

Հայ մասնագետները, սակայն, մեջբերելով Ադրբեջանի նախագահի տարբեր հայտարարություններ ու ելույթներ, ընդգծում են՝ այդ երկրում ջրի խնդիր կա: Ընթացիկ տարվա ապրիլին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, ելույթ ունենալով Շիրվանի ջրանցքի հիմնարկեքի արարողությանը, անկեղծացել էր՝ Ադրբեջանի համար առաջնային խնդիր է ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը:

Հայ մասնագետները համաձայն են՝ Ադրբեջանն իսկապես ջրային ռեսուրսների խնդիր ունի: Հիդրոլոգ Բենիամին Զաքարյանն ասում է.

*«Ադրբեջանը ջրային ռեսուրսների խնդիրներ ունի իր երկրում: Գուցե որոշ հատվածներում գետերի հունը փոխելու փորձեր անի: Ջրային պատերազմը սկսվել է, Հայաստանը պետք է բանիմաց ձևով կառավարի իր ռեսուրսները»:*

Սա ենթադրում է նոր ջրամբարների կառուցում, որպեսզի ջրերն ամբարվեն հենց մեր երկրում՝ բացատրում է մասնագետը: Կիրանց ու Ոսկեպար գետերի վերին հատվածներում, Արփա՝ Վայոց Ձորում, Հախինջան, Աղստև, Տավուշ գետերը՝ Տավուշի մարզում: Թվարկած բոլոր գետերը Հայաստանում են ձևավորվում, բացառությամբ՝ Որոտանի ակունքներից մեկի, որը սկիզբ է առնում Քարվաճառից: Աշխարհագրագետ Ռուբեն Գալչիյանը նկատում է. *«Շատ ջրեր կան, որ հոսում են դեպի Ադրբեջան: Ադրբեջանի աշխարհագրական դիրքն այնպես է, որ մենք բարձրադիր ենք, իրենք՝ ցածրադիր»*:

Գետը բնական սահման է՝ ասում է մասնագետը: Դրա հունը հնարավոր է փոխել, բայց Հայաստանի տարածքում գետի հունն Ադրբեջանը չի կարող փոխել ՝ բացատրում է մասնագետը:

*«Ադրբեջանը փորձում է մեր բոլոր գետերի վրա քանակական և որակական խնդիրներ առաջացնել: Որոտան գետը Որոտան բնակավայրից հեռու է: Այդ գետի ջրերը Շամբի ջրամբար են լցվում, նաև՝ վայրկյանում 18 խորանարդ մետր ջուր գնում է դեպի Ադրբեջան, շատ մաքուր ջուր է, միևնույնն է, նրանք նորից իրենք խնդիրներ են առաջացնում: Իսկ էկոլոգիական հոսքն ընդամենը չորսից հինգ մետր խորանարդ է: Մենք կարող ենք 12 խորանարդ մետր ջուր այնտեղից վերցնել, հետ մղել դեպի Գորիսի տարածաշրջան և այլ տեղեր, որոնք ջրի խնդիր ունեն: Էլի բողոք, մենք ինչ էլ անենք, մեկ է, Ադրբեջանը բողոքում է»:*

Բնապահպան Օլեգ Դուրգարյանը նշում է՝ Ադրբեջանի՝ հայկական գետերի վերաբերյալ ժամանակ առ ժամանակ բարձրացրած աղմուկն իրական հիմք չունի: Եթե անգամ անդրսահմանային որևէ գետ աղտոտված է, այն ավելի շատ երկրի ներսում է խնդիրներ ստեղծում, քան երկրի սահմաններից դուրս: Գետը հոսելով ինքնամաքրվում է՝ բացատրում է Դուրգարյանը:

*«Ադրբեջանն իր գետերի վրա շատ ջրամբարներ է կառուցում, որոնք սակավացնում են ջրային ռեսուրսները, հատկապես այնպիսիները, որոնք պետք է թափվեն Կասպից ծով: ՀԷԿ-եր է շատ կառուցում: Ադրբեջանում արտադրություններ կան, որոնք աղտոտում են գետերը: Դրա մասին երբեմն բարձրաձայնում են ադրբեջանցի ակտիվիստները, որոնք այլևս Ադրբեջանում չեն գտնվում: Դրա մասին Ադրբեջանը պարզապես քիչ է խոսում: Կարելի է նաև համարել, որ Ադրբեջանը տարածաշրջանի և ջրային ռեսուրսների, Կասպից ծովի առումով ամենաաղտոտող երկրներից մեկն է»:* Հայ մասնագետներն ընդգծում են՝ այսօր առավել քան երբևէ կարևոր է ջրային ռեսուրսների ճիշտ ու արդյունավետ կառավարումը:

**ՀԱՍՄԻԿ ԴԻԼԱՆՅԱՆ**
**15.11.2024**

## Հայաստանի և Ադրբեջանի ինժեներներն աշխատում են ջրային ռեսուրսների կառավարման վրա

Ադրբեջանի և Հայաստանի մի խումբ հիդրոլոգներ և ինժեներներ ԱՄՆ-ի աջակցությամբ համատեղ աշխատում են տարածաշրջանի անդրսահմանային գետերի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման սխեմայի վրա: Այս մասին COP29-ի շրջանակներում հայտարարել է Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Մարկ Լիբբին:

Նա նշել է, որ Ադրբեջանն ունի արևային և քամու էներգիայի զգալի ներուժ և COP29-ում ցույց է տալիս ածխաջրածնային հատվածում կայուն զարգացման և արտանետումների կրճատման հարցում իր առաջատարությունը:

**12.11.2024**

## Նախատեսվում է արձակուրդի իրավունքից չօգտվելու դեպքում լրացուցիչ միանվագ արձակուրդային վճարը տարեվերջին տրամադրել

Եթե պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք չօգտվեն իրենց ամենամյա արձակուրդի իրավունքից կամ դրա մասը տեղափոխեն հաջորդ աշխատանքային տարի, ապա լրացուցիչ միանվագ արձակուրդային վճարն այնուամենայնիվ նրանց կտրամադրվի տվյալ աշխատանքային տարվա վերջում:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին ԱԺ–ում ասաց ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավար Վաչե Քալաշյանը՝ «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագծի քննարկմանը:

**«Առաջարկվում է, որ միանվագ լրացուցիչ արձակուրդային վճարը մեկ օրացույցային տարում աշխատողին տրամադրվի մեկ անգամ: Երկրորդ կարգավորման համաձայն՝ եթե աշխատողն իր արձակուրդի իրավունքից չի օգտվում կամ տեղափոխում է հաջորդ տարի, ապա իր աշխատանքային տարվա վերջում այդ լրացուցիչ միանվագ արձակուրդային վճարը բոլոր դեպքերում կտրամադրվի»,**– ասաց Քալաշյանը:

Նա այս առաջարկը հիմնավորեց հետևյալ կերպ՝ աշխատավարձի ֆոնդում արձակուրդային վճարներն առանձին տողով չեն վարվում բյուջետավարման ընթացքում, և, եթե միանվագ լրացուցիչ արձակուրդային վճարներն արձակուրդի իրավունքից չօգտվելու դեպքում չեն վճարվում, ապա մարմինները դա ներկայացնում են որպես վարձատրության ֆոնդի խնայված միջոց և վճարում որպես պարգևատրում: Այսինքն՝ ծախսային ուղղությունները փոխվում են և բյուջեի կանխատեսելիությունը՝ նվազում:

**«Եթե հիմնական արձակուրդային վճարը և միանվագ լրացուցիչ արձակուրդային վճարը վճարվել են ոչ արձակուրդի իրավունքին համապատասխան, ապա աշխատանքից ազատվելու դեպքում այդ տարբերությունը պետք է հետ գանձվի»,**– նշեց նա:

Արձակուրդի հետ կապված կարգավորումներն ուժի մեջ կմտնեն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո նոր աշխատանքային տարվանից:

Նախագծով սահմանվում է, որ պետական պաշտոն եւ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձին յուրաքանչյուր աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի համար հիմնական արձակուրդային վճարից (միջին աշխատավարձից) բացի, մեկ անգամ տրվում է լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով: Ընդ որում՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում պետական պաշտոն եւ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձին լրացուցիչ միանվագ արձակուրդային վճարը տրվում է մեկ անգամ:

**14.11.2024**

# Ռազմական ճանապարհով օկուպացված տարածքների հարցը լուծելու խնդիր դրված չէ

*«Զորակոչը շարունակում է մեր երկրի՝ պետության առաջ ծառացած մարտահրավերներից մեկը հանդիսանալ: Մի երևույթ կա, երբ Հայաստանի քաղաքացին իր զավակին հրաժարեցնում է Հայաստանի քաղաքացիությունից, որպեսզի զինված ուժերում չծառայի»:*

Այս մասին 2025 թ. բյուջեի քննարկման ժամանակ ասաց պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը:

*«Ես կարծում եմ՝ պիտի որոշակի լյուստրացիայի ենթարկենք՝ այս հանգամանքից ելնելով, մեր շրջապատին, ու առաջին հերթին նաև դիմել եմ ՀՀ վարչապետին, որ նմանատիպ պրոցես սկսենք պետական կառավարման համակարգում: Իմ կարծիքով՝ պետական պաշտոնյան չպիտի իրեն թույլ տա, որ ոչ միայն իր զավակը, այլև իր մերձավոր շրջապատի հարազատի զավակները հրաժարվեն Հայաստանի քաղաքացիությունից: Այդ երևույթը կա, ցավալի ցուցանիշներ կարող ենք արձանագրել: Նոր չէ այս երևույթը, չգիտեմ՝ քանի տարվա պատմություն ու խորք ունի, բայց սա մի երևույթ է, որի դեմ պետք է պայքարել»,–* ասաց նա:

Պապիկյանի խոսքով՝ ՀՈՒ-ում կատարվող բարեփոխումների նպատակը արհեստավարժ բանակ ունենալն է. *«ՀՀ բանակում կատարվող բարեփոխումները, ծախսերն ու ներդրումները միտված են մեկ կարևոր նպատակի՝ ունենալ արհեստավարժ, մարտունակ և ժամանակակից բանակ, որն ունակ կլինի պաշտպանելու Հայաստանի Հանրապետության 29.743 քառակուսի կիլոմետր սուվերեն տարածքը: Սա միակ խնդիրն է, որ դրված է բանակի առաջ»:*

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության՝ օկուպացված շուրջ 200 քառակուսի կիլոմետր տարածքի խնդրին, ապա, ըստ նախարարի, ռազմական ճանապարհով այդ հարցը լուծելու խնդիր դրված չէ, որովհետև սահմանազատման գործընթացը հնարավորություն է տալիս այդ հարցը լուծել խաղաղ, բանակցային ճանապարհով. *«Առավել ևս այս քաղաքական խնդրի ներքո ՀՀ բանակը, բացի ՀՀ տարածքային ամբողջականությունն արտաքին հարձակումից պաշտպանելուց, այլ խնդիր չունի և չի ունենալու»:*

**13.11.2024**

## Արցախի մշակութային ժառանգության պահպանությանը նվիրված միջազգային համաժողով

**Հռոմի Սուրբ Թովմա Ակվինացու անվան քահանայապետական համալսարանում նոյեմբերի 18-19-ը տեղի է ունեցել միջազգային համաժողով նվիրված Արցախի մշակութային ժառանգության պահպանությանը: Այն կրում էր «Սրբազան հողեր, ընդհանուր տեսլական» խորագիրը («Sacred Grounds, Shared Vision»):**

Համաժողովը կազմակերպվել է Սուրբ Աթոռում Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցչության և Անգելիկումի էկումենիկ հետազոտությունների ինստիտուտի կողմից՝ Ամենայն Հայոց կաթողիկոսության հովանավորությամբ:

Համաժողովին իր մասնակցությունն է բերել Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, ով իր ողջույնի խոսքը փոխանցեց համաժողովի մասնակիցներին: Վրթանես Սրբազանն իր խոսքում մասնավորաբար անդրադարձ կատարեց տարածաշրջանում տեղի ունեցած պատերազմին և բռնի տեղահանությանը, ինչը խախտել է այն բազմադարյա ներդաշնակությունը, որը տիրում էր տարածաշրջանում արցախցիների տեղաբնակությամբ պայմանավորված: Սրբազան Հայրը ժողովականներին ներկայացրել է, որ ներկայումս պղծվում և ոչնչացվում է մեր բազմադարյա մշակույթը, ինչը ստեղծվել է նվիրական հավատքի և քրտնաջան աշխատանքի շնորհիվ՝ հիշեցնելով և կոչ անելով, որ գիտական միտքը պիտի դառնա գերիշխող քաղաքական մտքի նկատմամբ, որպեսզի օբյեկտիվ արդարությունը տեսանելի լինի: Վրթանես Սրբազանը նաև կոչ արեց քրիստոնյա աշխարհին աղոթել և գործել տարածաշրջանում խաղաղության պահպանման համար: Ամփոփելով իր խոսքը՝ Սրբազան Հայրը շնորհակալություն հայտնեց համաժողովի կազմակերպիչներին, մասնավորաբար Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տեր Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին, որից հետո ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը:

Համաժողովին ելույթ է ունեցել Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տեր Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը: Համաժողովին ներկա հոգևորականներն ընթերցել են Կարդինալ Կուրտ Քոխի, Կարդինալ Կլաուդիո Գուջերոտտիի և Կարդինալ Խոսե Տոլենտինո դե Մենդոնսայի ողջույնի խոսքերը: Ելույթով հանդես են եկել Արցախի թեմի թեմական խորհրդի անդամ Արմինե Ալեքսանյանը՝ «Հակամարտության գոտիներում մշակութային և կրոնական ժառանգության պաշտպանության դիվանագիտական և այլ միջոցներ. ի՞նչ կարելի է անել դրանք ընդլայնելու համար» թեմայով և պ.գ.դ., պրոֆ., ԵՊՀ, ՀԱԻ Համլետ Պետրոսյանը «Հուշարձանների ներկայիս վիճակը Արցախում» թեմայով:

Համաժողովում զեկույցներով հանդես եկան նաև մի շարք այլ փորձագետներ Եվրոպայից, ԱՄՆ-ից, Հայաստանից և Մերձավոր Արևելքից:

**21.11.2024**

## Բելգիացի քաղաքական գործիչները Բաքվից պահանջել են ազատել հայ գերիներին և դուրս գալ ՀՀ տարածքներից

Բաքվում ընթացող COP 29-ի առիթով Բելգիայի Դաշնային, Ֆլանդրիայի, Վալոնիայի և Բրյուսելի խորհրդարանների 20 անդամներ դիմել են Ադրբեջանի կառավարությանը և COP 29-ին մասնակից Բելգիայի կառավարության պատվիրակությանը՝ երեք հիմնական պահանջներով. *Ազատություն Ադրբեջանում գտնվող հայ ռազմագերիներին, Արցախի հայկական մշակութային ժառանգության պաշտպանություն և ադրբեջանական ուժերի դուրսբերում Հայաստանի Հանրապետության օկուպացված տարածքից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դեմ ադրբեջանական ցանկացած ագրեսիայի զսպում:*

Հայտարարությունը ստորագրվել է Բելգիայի հիմնական քաղաքական կուսակցությունների կողմից՝ MR, Les Engagés, DéFI, N-VA, CD&V, Vooruit և Groen: Առաջին երեքի դեպքում հայտարարությունը ստորագրել են անձամբ կուսակցությունների ղեկավարները:

Բելգիացի քաղաքական գործիչները նախ շեշտում են, որ իբրև COP 29-ը ընդունող երկիր՝ Ադրբեջանը պարտավոր է շոշափելի հավատարմություն ցուցաբերել մարդու իրավունքների, մարդու արժանապատվության և արդարության հիմնարար սկզբունքներին: Այնուհետև նրանք նշում են իրենց պահանջները՝ հիշեցնելով 2020 թվականի դեկտեմբերի 16-ից հետո Բելգիայի Դաշնային, Ֆլանդրիայի և Վալոնիայի խորհրդարանների կողմից ընդունված՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ բանաձևերը:

Այդ, ինչպես նաև 2021 թվականի մայիսից և 2024 թվականի հոկտեմբերից հետո Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված բանաձեւերին համահունչ՝ բելգիացի քաղաքական գործիչներն Ադրբեջանի կառավարությանը կոչ են անում.

- անհապաղ և անվերապահորեն ազատ արձակել Բաքվում պահվող բոլոր հայ ռազմագերիներին, պատանդներին և գերիներին՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղի ռազմաքաղաքական ղեկավարությանը:
- Ապահովել Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային և կրոնական ժառանգության՝ ներառյալ վանքերի խաչքարերի անձեռնմխելիությունը: Զերծ մնալ դրանց ալբանացումից, ինչպես նաև պատմական վերանայումներից:
- Զերծ մնալ Հայաստանի Հանրապետության դեմ սպառնալիքներից և ցանկացած ագրեսիայից, դուրս բերել ադրբեջանական զինուժը Հայաստանի Հանրապետությունում օկուպացված տարածքներից:

Բացի այդ, համահեղինակները Բելգիայի կառավարության պատվիրակությանը կոչ են անում COP 29-ին մասնակցության ընթացքում գործել վերը նշված խորհրդարանական բանաձևերի ոգուն համահունչ:

ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանը ողջունել է այս նախաձեռնությունը՝ նշելով. *«Մենք երախտապարտ ենք հայտարարության համահեղինակներին, որոնց թվում են խոշոր քաղաքական կուսակցությունների նախագահները, բարձրաստիճան խորհրդարանականները և օրենսդիր մարմնի բոլոր մակարդակների ներկայացուցիչներ: Անհրաժեշտ է ճնշում գործադրել Ադրբեջանի կառավարության վրա՝ մղելու նրանց հարգել միջազգային նորմերը և գործել դրանց համապատասխան:*

*Այս հայտարարությունն ընդգծում է այդ անհրաժեշտությունը և հստակ ուղերձ է, որին COP29-ին մասնակից բելգիական պատվիրակությունը պետք է հավատարիմ մնա: ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակը կշարունակի իր հավատարմությունն արդարությանն ու խաղաղության հաստատմանը և միշտ կձգտի ընդգծել այդ նպատակներին հասնելու համար բովանդակալից և անմիջական գործողությունների անհրաժեշտությունը»:*

**21.11.2024**

# Արցախցիներին տրվող աջակցությունը 2025-ին աստիճանաբար կնվազեցվի

**Կառավարությունը նոյեմբերի 21-ի նիստում հաստատեց ԼՂ-ից բռնի տեղահանված առանձին խմբերի անձանց կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը:**

Ներկայացնելով նախագիծը, **աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը նշեց**. *«Հաշվի առնելով բռնի տեղահանումից ի վեր ԼՂ-ից տեղահանվածների տնտեսական ինտեգրման դրամական միտումները և բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրի մեկնարկը՝ առաջարկում ենք 2025 թվականի հունվարից դեկտեմբեր ամիսների համար հաստատել նորացված աջակցության ծրագիր, որով տարվա ընթացքում աստիճանաբար կնվազեցնենք ընդհանրական բնույթի աջակցությունը, բայց կբարձրացնենք աջակցության հասցեականությունը՝ շեշտելով հատուկ առանձին թիրախ խմբերին»:* Նա հիշեցրեց, որ նախկինում գործում էր «40+10 հազար» աջակցության ծրագիրը, որը պետք է գործեր մինչև 2024 թվականի դեկտեմբերը:

*«Այսպիսով, 2025 թվականի հունվար-մարտ ամիսներին տրամադրվող սոցիալական աջակցության ամսական չափը կկազմի 50 հազար դրամ: Այս ամիսների ընթացքում՝ մինչև մարտ, ըստ էության, շահառուների շրջանակը կլինի գրեթե նույնը, ինչ եղել է 2024-ին, այստեղ շատ փոփոխություն չի լինի, 2025 թվականի ապրիլ-հունիս ամիսները ներառյալ:*

*Մենք առաջարկում ենք սոցիալական աջակցության չափը սահմանել 40 հազար դրամ՝ միաժամանակ հասցեագրել բռնի տեղահանված առանձին խմբերից հետևյալ անձանց. մինչև 18 տարեկան երեխաներին կամ պարտադիր կրթություն ստացող 18 տարին լրացած անձանց, 63 և ավելի տարիք ունեցող անձանց կամ կերակրողին կորցրածներին, ինչպես նաև առաջին կամ երկրորդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց:*

*Իսկ 2025 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսներինը ներառյալ աջակցությունը կշարունակենք նույն խմբերի համար, սակայն 30 հազար դրամի չափով», –* ասաց նախարարը:

Ըստ Նարեկ Մկրտչյանի՝ որոշումը պայմանավորված է մի քանի պատճառով. նախ՝ 2024-ի հունիսից արդեն իսկ մեկնարկել է բնակարանային պետական աջակցության ծրագիրը, որը շահառուների առանձին խմբերի համար հնարավորություն է տալիս պետության աջակցությամբ գնել կամ կառուցել սեփական բնակելի տարածք, իսկ մյուս մասը կարող է շահառու դառնալ եկող տարվա սկզբից:

*«Հաջորդ պատճառն այն է, որ ունենք դրական միտում՝ ներառվելու մասով, որովհետև երբ հետևում ենք, որ բավականին մեծ թվով՝ շուրջ 25 հազար և ավելի տեղահանվածներ անցել են աշխատանքի կամ ձեռնարկատիրական գործունեությամբ են զբաղվում, որոնք 18-60 տարեկան անձանց շրջանում բավականին մեծ թիվ են կազմում, կարծում ենք, որ պետական աջակցությունը պետք է աստիճանաբար հասցեագրվի առավել թիրախային և երկարաժամկետ լուծումների նպատակով, հատկապես՝ բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրին»:*

**25.11.2024**

## Եվրախորհրդի կոմիտեն Բաքվին կոչ է անում՝ պայմաններ ստեղծել Արցախից տեղահանվածների վերադարձի համար

**Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեն Ալիևի վարչակազմին կոչ է արել «քաղաքական, իրավական, գործնական պայմաններ ստեղծել, որոնք անհրաժեշտ են Ղարաբաղից տեղահանված հայերի անվտանգ ու անարգել վերադարձի համար, ինչպես նաև հատուկ մեխանիզմ՝ սեփականության հարցերը լուծելու նպատակով»:**

**«Ադրբեջանի իշխանություններին կոչ է արվում գույքագրել, պաշտպանել և պահպանել հայկական բոլոր կրոնական ու մշակութային վայրերն ու արտեֆակտները, ինչպես նաև հետաքննել տարածաշրջանում էթնիկ հայերի կողմից օգտագործվող պատմամշակութային հուշարձանների և գերեզմանոցների վանդալիզմի, ոչնչացման ու փոփոխման մասին բոլոր մեղադրանքները»,–** ասված է փաստաթղթում:

Եվրախորհրդի խորհրդատվական կոմիտեն ծավալուն զեկույցում բազմաթիվ դեպքեր է վկայակոչել՝ պնդելով, որ ղարաբաղյան հակամարտության համատեքստում առկա է Հայաստանի Հանրապետության դեմ հրապարակային հռետորաբանություն, որն անմիջական ազդում է էթնիկ հայերի նկատմամբ վերաբերմունքի վրա:

Պաշտոնական Բաքուն ի պատասխան անհիմն է որակել Եվրոպայի խորհրդի զեկույցում տեղ գտած պնդումները՝ հայտարարելով, որ Կոմիտեի կողմից կիրառվող մոտեցումը «լուրջ հարցեր է առաջացնում»:

**«Խորհրդատվական կոմիտեի խտրական մոտեցումը, որը կենտրոնանում է հայկական էթնիկ խմբի վրա՝ անտեսելով մյուս էթնիկ խմբերը և չափից դուրս հենվելով անհայտ աղբյուրներից ստացված տեղեկատվության վրա՝ առանց համապատասխան օրինակներ բերելու, միանգամայն հստակ ցույց է տալիս նշված կոմիտեի կողմնակալ մոտեցումը»**,– հայտարարել է Ադրբեջանի ԱԳՆ-ն:

2023 թվականի սեպտեմբերի 19-20-ը Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի իրականացրած ռազմական ագրեսիայի հետևանքով Արցախը հայաթափվեց, 105 հազար արցախահայեր ապաստանեցին Հայաստանում:

**18.11.2024**

## Իրանն ու Ադրբեջանը համատեղ զորավարժություններ են սկսել

Ադրբեջանի և Իրանի զինվորականներն Իրանի Արդաբիլ նահանգում սկսել են «Արազ-2024» քառօրյա համատեղ զորավարժությունները:

2 երկրի պաշտպանական գերատեսչությունների հաղորդագրությունների համաձայն՝ զորավարժություններն անցկացվում են Ասլանդուզի շրջանում՝ Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ցամաքային զորքերի և Ադրբեջանի զինված ուժերի հատուկ նշանակության ստորաբաժանումների մասնակցությամբ:

Մինչ զորավարժությունների մեկնարկը երկու երկրների պատվիրակությունների բարձրաստիճան անդամների մասնակցությամբ հրամանատարաշտաբային խորհրդակցության ժամանակ որոշվել է զորավարժությունների փուլերի և դրվագների հաջորդականությունը, բացատրվել են անվտանգության կանոնները:

**25.11.2024**

## Ադրբեջանը և Իրանը ռազմական համագործակցության արձանագրություն են ստորագրել

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունն այցելել է Թեհրան՝ մասնակցելու երկրի ՊՆ-ի և Իրանի Իսլամական Հանրապետության ՀՈՒ գլխավոր շտաբի միջև Ռազմատեխնիկական համագործակցության համատեղ հանձնաժողովի նիստին:

Այս մասին հայտնել է Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը:

Այցի ընթացքում ադրբեջանական պատվիրակության ղեկավար, ռազմատեխնիկական աջակցության գլխավոր վարչության պետի պաշտոնակատար, գեներալ-մայոր Ֆարիդ Ալիևը հանդիպել է Իրանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ, գեներալ-մայոր Մոհամմադզա Աշտիանիի հետ:

Հանդիպմանը մտքերի փոխանակություն է տեղի ունեցել երկու երկրների միջև ռազմական համագործակցության ներկա վիճակի և զարգացման հեռանկարների շուրջ, քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Կողմերը քննարկել են նաև Ադրբեջանի և Իրանի ռազմական կառույցների միջև համագործակցության զարգացման հարցեր:

Եզրափակելով՝ ստորագրվել է արձանագրություն, որը պարունակում է հոդվածներ համագործակցության այն ոլորտների վերաբերյալ, որոնց շուրջ ձեռք է բերվել պայմանավորվածություն:

**20.11.2024**

# «Արի Կապան». պատմում են դիմանկարները

Կապանի մշակույթի կենտրոնի նախասրահում նոյեմբերի 24-ին բացվեց «Արի Կապան» խորագրով ցուցահանդեսը՝ «Gastronomic Camp Armenia» նախագծի շրջանակում: Դեռևս հոկտեմբերի 3-ին Երևանում կայացավ նախագծի առաջին այցեքարտային լուսանկարների ցուցադրանքը: Ֆոտոնախագծի շրջանակում Կապանն ու կապանցին ներկայացվել էին տաղանդավոր լուսանկարիչ Նարեկ Արշակյանի աչքերով, ում աշխատանքները լայն ճանաչում ունեն Հայաստանում ու սփյուռքում:

Ցուցադրանքում 31 դիմանկար է՝ տարբեր տարիքի և զբաղմունքի տեր կապանցիներ՝ գեղանկարիչ, սպորտսմեն, խոհարար, երաժիշտ, լրագրող, դերասան և այլն: «Արի Կապան» գրություն կար լուսանկարի տակ և հիմնավորումը՝ թե ինչու. քանզի այստեղ լեռների գերբնական ուժ կա, կսիրահարվես Խուստուփին, չպարտվող մարդկանց կհանդիպես և այլն:

Բացելով ցուցահանդեսը՝ «Gastronomic Camp Armenia» նախագծի համահիմնադիր Աննա Մազմանյանը նշեց, որ շատ էին ուզում պատմել Կապանի մասին և այստեղ հանդիպեցին հետաքրքիր մարդկանց:

*«Սիրելի կապանցիներ, շնորհակալ եմ, որ հնարավորություն տվեցիք ձեր միջոցով ներկայացնել Կապանը: Ասեմ, որ այս ցուցահանդեսը կազմակերպվել է նաև Երևանում, ցուցահանդեսի այցելուները հետաքրքրվում էին ձեզանով, մենք շատ-շատերին պատմել ենք բոլորիդ մասին, ձեր միջոցով մարդիկ փորձել են ճանաչել Կապանը: Հուսով եմ՝ այդ մարդիկ կայցելեն Կապան, կծանոթանան ձեր մշակույթին, ձեր արժեքներին»,–* ասաց լուսանկարիչ Նարեկ Արշակյանը:

Կապանի համայնքապետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ Թերեզա Գալստյանը նշեց, որ լուսանկարներում մարդիկ են, ովքեր աշխատանքային գործունեությամբ և նվիրումով ստեղծել ու ստեղծում են Կապանի կոլորիտը: Բանասեր, մանկավարժ Լևոն Մարգարյանի լուսանկարի տակ գրառում կա՝ արի Կապան, հաղորդակցվենք բարբառով: Իր ասածին հավատարիմ մնալով՝ նա կապանյան խոսվածքով խաղիկներ արտասանեց՝ իրոք կոլորիտ ստեղծելով: Կապանի պատվավոր քաղաքացի Սվետլանա Գևորգյանը կարծիք հայտնեց, որ յուրաքանչյուր կապանցի կարող էր տեղ գտնել այդ տաղավարում:

Ցուցահանդեսի մեկնարկը տրվեց Վահանավանքի հոգևոր հովիվ տեր Ավետիք քահանա Մարտիրոսյանի օրհնանքի խոսքից հետո. այն կգործի մինչև դեկտեմբերի 8-ը:

Հայտնվեց նաև, որ ցուցահանդեսը մյուս տարվա փետրվարին կներկայացվի Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում, ասել է թե՝ Երևանից մեկնողներին, ավելի շատ հայաստան եկողներին կհուշի՝ արի Կապան:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

## Ամենամյա դարձած Կորկոտի փառատոնը հասավ Եղվարդ

Նոյեմբերի 16-ին՝ սահմանամերձ Եղվարդ գյուղում մեծ տոնախմբությամբ անցկացվեց կապանյան ավանդական ուտեստի՝ «Կորկոտի» փառատոնը, որն արդեն հինգերորդ տարին է՝ իր շուրջն է համախմբում հազարավոր կապանցիների, այդ թվում նաև Կապան այցելած բազմաթիվ հյուրերի: Իր ձևաչափով տարբերվող և արդեն ավանդույթ դարձած փառատոնը տարեցտարի առավել լայն ճանաչում և մասսայականություն է վայելում: Դրա մասին է վկայում փառատոնին մասնակցելու ցանկություն հայտնած կորկոտ պատրաստողների թիվը, որը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 6-ով:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս փառատոնի գլխավոր 22 հերոսները՝ կուրկուտ պատրաստողները, մինչ հյուրասիրությունը համայնքի ղեկավարի անունից ստացան խորհրդանշական նվերներ՝ խոհարարական դանակներ:

Փառատոնին «համ ու հոտ» հաղորդեցին թեմատիկ ու աչքի ընկնող տաղավարները, որտեղ իրենց մասնակցությունն էին բերել համայնքի նախադպրոցական ուսումնական բոլոր հաստատությունները, համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի անդամները, ովքեր բացի կորկոտից ու տեղում թխվող լավաշից, հյուրասիրում էին նաև ավանդական թթուների տեսակներ, տնական գաթաներ, փախլավա, ինքնաեռով պատրաստված անուշահամ թեյ, սուրճ՝ տարատեսակ չրերով, մուրաբաներով և ջեմերով:

Առանձին տաղավարներով ներկայացել էին նաև եղվարդեցիները և հարակից գյուղերը՝ իրենց բերք ու բարիքով և ձեռքի աշխատանքներով: Այս ամենը ուղեկցվում էր հատուկ հրավիրված հյուր՝ «Էթնո քոլորս/Ethno colors» երաժշտական խմբի գեղեցիկ կատարումներով:

Փառատոնն ուներ նաև մարզական բաղադրիչ, տեղում ձևավորված թիմերը հնարավորություն ունեցան իրենց ուժը ցուցադրել պարանի ձգման մրցաշարում և պարգևատրվել հավաստագրերով, մեդալներով և նվերներով:

Այս տարի փառատոնի պատվավոր հյուրն էր «Հայ խոհարարական ավանդույթների զարգացում և պահպանում» ՀԿ-ի նախագահ Սեդրակ Մամուլյանը, ով գլխավորում էր նաև ժյուրիի կազմը: Բոլոր մասնակիցների պատրաստած կորկոտը համտեսելուց հետո, ժյուրիի անդամները չիմանալով, թե մասնակիցներից ով, որ կորկոտն է պատրաստել, ընտրեց ամենահամեղ պատրաստվածը:

Այսպիսով, «Կորկոտի փառատոն-2024» մրցանակի հաղթող ճանաչվեց Արմենակ Պողոսյանը: Փառատոնի մասնակիցների ընտրությամբ՝ «Լավագույն տաղավար» ճանաչվեց Կապանի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատությունը: Իսկ «Լավագույն կենաց» ասող դարձավ Արամ Հայրապետյանը: Նշենք, որ կապանցիների և հյուրերի կողմից ամենասիրված ու սպասված նախաձեռնություններից մեկն իրականացվում է Կապանի համայնքապետարանի և մշակույթի կենտրոնի համատեղ ջանքերով:

**16.11.2024**

## Ծառատունկ՝ Կապանի Գործարանային փողոցում

Առանձնակի կարևորելով համայնքում կանաչ գոտիների ընդլայնմանն ու կանաչապատ տարածքների ավելացմանն ուղղված ծրագրերի կյանքի կոչումը, նոյեմբերի 23-ին Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը և «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Սասուն Ավետիսյանը Գործարանային փողոցի ճանապարհի երկայնքով իրականացրել են ծառատունկ:

Նշված տարածքում տնկվել է շուրջ 270 սոսի արևելյան տեսակի ծառ, որը հարմարված է տեղի բնակլիմայական պայմաններին, ունի վրանաձև սաղարթ, կարողանում է դիմակայել ծխին, փոշուն և շոգին:

Համայնքապետարանը նախատեսում է իր գործընկերների հետ միասին քաղաքի տարբեր հատվածներում տնկել մինչև 1000 ծառ, որոնց հետագա խնամքով զբաղվելու է «Կապան համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ը:

**25.11.2024**

# Քաջարանում «Սյունյաց երկրի» հատուկ համարի շնորհանդեսն էր

**Քաջարանի մշակույթի պալատում նոյեմբերի 19-ին տեղի ունեցավ «Սյունյաց երկիր» թերթի հատուկ թողարկման՝ «Մարզական Սյունիք. անցյալն ու ներկան» (ամսագրային տարբերակ) շնորհանդեսը: Օրվա խորհուրդը ներկայացրեց «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության լրատվության և հասարակության հետ կապերի բաժնի պետի տեղակալ Լիլիթ Իսրայելյանը:**

Հատուկ համարը լույս է տեսել «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ, «Սյունիք» ֆուտբոլային ակումբի գործադիր տնօրեն Վարդան Ջհանյանի նախաձեռնությամբ ու բարի կամեցողությամբ:

Շնորհավորանքի խոսքում նա, մասնավորապես, նշեց՝ *«Երբ թերթի խմբագրի հետ քննարկում էինք համարի նախագիծը, չէի կարծում, որ այդքան հաջողված թողարկում կստացվի»:* Նաև հայցեց այն մարզիկների ներողամտությունը, ովքեր ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել համարից՝ հավելելով, որ գուցե մի քանի տարի հետո խմբագրությունը վերստին անդրադառնա այս թեմային:

Վարդան Ջհանյանը բարձր գնահատեց խմբագրակազմի աշխատանքը՝ մարզի սպորտային անցյալն ու ներկան ներկայացնող և նախօրինակը չունեցող թերթի հրատարակման համար:

Կոմբինատի կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը նույնպես շնորհակալություն հայտնեց թերթի խմբագրակազմին՝ նշանակալի աշխատանքի համար: Նաև շատ դրական համարեց, որ ամսագրային այդ տարբերակով խմբագրությունը քարոզում է առողջ ապրելակերպ, սպորտի կարևորությունը յուրաքանչյուրի կյանքում: Ինչ վերաբերում է կոմբինատին, ձեռնարկության ղեկավարությունն իր տեսադաշտում է պահում սպորտը, մասնավորապես հովանավորում «Սյունիք» ֆուտբոլային ակումբին, մենապայքարային մարզաձևերին: Նա նշեց քիքբոքսինգի «Գարեգին Նժդեհ» ակումբի սաների հաջողություններն աշխարհի առաջնությունում:

«Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի հիմնադիր տնօրեն, Քաջարանի պատվավոր քաղաքացի Մերուժան Աթայանը փոխանցեց Սյունիքի բազմաթիվ մարզիչների և մարզիկների ոգևորությունը, որն առաջ է բերել «Սյունյաց երկրի» հատուկ համարի թողարկումը:

«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը նախ՝ երախտագիտություն հայտնեց Վարդան Ջհանյանին, ում բարի կամեցողությամբ ընթերցողի սեղանին դրվեց Սյունիքի մարզաշխարհի մասին պատմող հատուկ թողարկումը: Այնուհետև մանրամասնեց, թե ինչ խնդիրներ էր դրված համարի առջև և ինչ սկզբունքներով է առաջնորդվել խմբագրակազմը՝ համարի նյութերը պատրաստելիս: Համարում նկատելի է լավը, դրականը, կառուցողականը տեսնելու, մարդկանց կամ թիմերին քաջալերելու ակնհայտ միտումը: Այդուհանդերձ բանախոսը մատնանշեց սպորտի ոլորտում առկա բազմաթիվ հիմնախնդիրներից երկու-երեքը, այն է՝ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման մտահոգիչ դրվածքը կրթական ոլորտում, գյուղական բնակավայրերում խաղահրապարակների ձևական բնույթ կրելը, սպորտային-մարզական կյանքի բացակայությունը գյուղական բնակավայրերի մեծ մասում:

*– Միևնույն ժամանակ՝ ամբողջ մարզում, թեև դանդաղ, բայց զգացվում է սպորտային կյանքի ակտիվացում, սպորտի նյութատեխնիկական բազայի հարստացում, պրոֆեսիոնալ մարզիչների և ընդհանրապես մասնագետների խավի ձևավորում, որի արդյունքում, մի շարք մարզաձևերում, արդեն իսկ ունենք պրոֆեսիոնալ սպորտ: Գնահատելի է, որ սպորտի մի շարք ձևերի օգնությամբ զարգացնում կամ տարածում ենք մարտարվեստը, որը չափազանց կարևոր հանգամանք է ռազմաքաղաքական բազում մարտահրավերների դեմ հանդիման կանգնած մեր հանրապետության համար,–* ասաց Սամվել Ալեքսանյանը

Պարբերականի խմբագիրը գնահատանքի խոսք ուղղեց խմբագրակազմի բոլոր անդամներին, ովքեր իսկապես իրենց գործի նվիրյալներն են, որոնց ջանքերով էլ ստեղծվել է հերթական բացառիկ համարը: Շնորհակալության խոսք ուղղվեց «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության լրատվական թիմին, ինչպես և մշակույթի պալատի աշխատակազմին՝ «Սյունյաց երկրի» թեմատիկ համարներին նվիրված միջոցառումներն այսկերպ՝ բարձրաճաշակ ու կազմակերպված անցկացնելու համար:

*– Չենք թաքցնում, նման միջոցառումները, ամեն ինչից զատ, նաև մեր խմբագրակազմին ու մեր աջակիցներին պարտավորեցնող իրադարձություն են, ստեղծագործական նոր արարումների մղող հանգամանք: Համոզված ենք՝ գալիք 2025 թվականին կունենանք նման մի շարք համարների հրատարակություն ևս, որոնցից յուրաքանչյուրն իրադարձություն կլինի Սյունիքի հոգևոր-մշակութային կյանքում: Ուրեմն՝ մեզ և ձեզ նոր հաջողություններ գալիք տարում,–* իր խոսքն ամփոփելով նշեց Սամվել Ալեքսանյանը:

Հանդիսությունը շարունակվեց աղանդերի սեղանի շուրջ, որտեղ հնչեցին շնորհավորանքներ, նաև անկեղծ քննարկում եղավ մարզի սպորտի ոլորտին առնչվող որոշ հարցերի վերաբերյալ: Իսկ մինչ այդ մշակույթի պալատի երաժիշտները՝ Լիլիթ Գրիգորյանը (ֆլեյտա), Նարա Մկրտչյանը (քանոն), Գոհար Հովհաննիսյանը (դաշնամուր), հնչեցրին Ջեյմս Լաստի «Միայնակ հովիվը» ստեղծագործությունը:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# «Россияне»-ն 30 տարեկան է

**Մարզկենտրոնի կայացած հասարակական կազմակերպություններից է «Россияне»-ն, որ հիմնադրվել է դեռևս Արցախյան առաջին պատերազմի դժվարին ժամանակներում:**

Անցած երեք տասնամյակում ՀԿ-ն աչքի է ընկել մնայուն գործերով:

Նոյեմբերի 22-ին Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում տեղի ունեցավ կազմակերպության 30-րդ տարեդարձին նվիրված հանդիսություն, որին մասնակցում էին մարզկենտրոնի տարբեր տարիքի և զբաղմունքի տեր մարդիկ, կազմակերպության աջակիցներ, Կապանի ռուսական համայնքի ներկայացուցիչներ, հյուրեր մայրաքաղաքից:

«Россияне» ՀԿ-ի անցած ուղու մասին ամփոփ ելույթով հանդես եկավ «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը՝ ընդսմին ներկայացնելով դրա ստեղծման նախապատմությունը, այդ համատեքստում նշելով, որ դեռևս անցած դարի 20-30-ական թվականներից ռուս ժողովրդի բազմաթիվ ներկայացուցիչներ սկսեցին մասնակցել Կապանի նոր վերածննդին: Դա պայմանավորված էր լեռնահանքային արդյունաբերության հանդեպ աճող հետաքրքրությամբ, այդ ոլորտին անհրաժեշտ կադրերի պահանջով:

Անդրադառնալով «Россияне» կազմակերպության գործունեությանը՝ բանախոսը, նախ և առաջ, արժանին մատուցեց նրա հիմնադիր նախագահ Գալինա Աղախանյանին. *«Նշանավոր այս օրը խոնարհվում ենք կազմակերպության հիմնադիր Գալինա Բորիսովնա Աղախանյանի հիշատակի առջև: Նա, առանց չափազանցության, հայ և ռուս ժողովուրդների բարեկամության խորհրդանիշ էր մեր տարածաշրջանում և ոչ միայն բարեկամության նորօրյա կրող կամ նվիրյալ: Գալինա Բորիսովնան վաղուց է հեռացել մեզանից, բայց թողել է պայծառ ու բարի հիշողություն, ընդօրինակման արժանի հետագիծ»:*

Կապանում բացվելիք հյուպատոսարանի՝ ՌԴ արտգործնախարարության առաջատար խմբի ղեկավար Իգոր Տիտովը հրապարակեց Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպան Սերգեյ Կոպիրկինի շնորհավորական ուղերձը «Россияне» կազմակերպության 30-րդ տարեդարձի առթիվ. *««Россияне» կազմակերպության ղեկավարությանը և աջակիցներին սրտանց շնորհավորում եմ հիմնադրման 30-րդ տարեդարձի առթիվ: Ձեր կազմակերպությունն ավելի քան երեք տասնամյակ զգալի ավանդ է ունեցել ռուսաց լեզվի և մշակույթի պահպանմանը Հայաստանում, օժանդակում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև մշակութային և մարդասիրական կապերի ամրապնդմանը, աջակցում է նրանց, ովքեր անկախ կրոնական պատկանելությունից և ազգությունից միանում են մեր հայրենակիցներին:*

*Հատկապես ուզում եմ երախտագիտություն հայտնել «Россияне» կազմակերպության նախագահ Լյուդմիլա Աղախանյանին, ով երկար տարիներ իր ուժն ու եռանդը ներդնում է կրթական և մշակութային տարածքի պահպանմանը, որ միավորում է հայ և ռուս ժողովուրդներին:*

*Անկեղծ երախտապարտ եմ Ձեզ՝ անմնացորդ նվիրումի, հայ և ռուս ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար:*

*Կազմակերպության բոլոր անդամներին մաղթում ենք քաջառողջություն, նորանոր հաջողություններ՝ նախանշված պլանների իրականացման ճանապարհին և ամենալավն ու բարին»:*

Բարեմաղթանքներ, շնորհավորանքներ հնչեցրին ՀՀ–ում «Россотрудничество» ներկայացուցչության ղեկավար Վադիմ Ֆեֆիլովը, ««Ծիածան» առաջնորդների կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Սուսաննա Մարտիրոսյանը, «Россияне» ընկերության նախագահ Ելենա Հակոբյանը, «Ода лучу» հասարակական ընկերության նախագահ Տատյանա Պապոյանը և ուրիշներ:

Վերջում երախտագիտության խոսքեր հնչեցրեց «Россияне» հասարակական կազմակերպության նախագահ Լյուդմիլա Աղախանյանը:

Հանդիսավոր մասի ավարտից հետո հանդես եկան մշակույթի կենտրոնի երգչուհիներ Ինգա Մանուչարյանը, Սուսաննա Գալստյանը:

Մշակույթի կենտրոնի «Նարին» պարային համույթի (գեղարվեստական ղեկավար՝ Նարինե Մովսիսյան) փոքրիկների պարն անտարբեր չթողեց ոչ մեկին:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**
**25.11.2024**

# Սյունյաց թեմի առաջնորդանիստ եկեղեցում աղոթք բարձրացվեց հայ գերիների վերադարձի համար

Ս. թ. նոյեմբերի 10-ին Սյունյաց թեմի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում գերաշնորհ տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանը մատուցեց իր եպիսկոպոսական ուխտի անդրանիկ պատարագը: Հավարտ պատարագի նաև աղոթք բարձրացվեց առ Աստված Ադրբեջանում ապօրինաբար բանտարկված հայ գերյալների համար, և հատուկ ուղերձով վերստին բարձրաձայնվեցին հայ գերիների ազատ արձակման և արցախահայության իրավունքների պաշտպանության հարցերը:

**ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ / SYUNYAC TEM**
**11.11.2024**

# Եռակողմ հուշագիր, որ կնպաստի մարզի համայնքների զարգացմանը

**Ավստրիական զարգացման գործակալությունը «Դիմակայություն Սյունիք թիմ Եվրոպա» նախաձեռնության շրջանակում տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ ծրագիր է իրականացնում Սյունիքում՝ միտված միկրո, փոքր և միջին բիզնեսների մրցունակության բարձրացմանը:**

Նաև օժանդակություն է տրամադրում համայնքային փոքր ենթակառուցվածքները վերականգնելու համար: Սիսիան (90 կՎտ) և Տեղ (80 կՎտ) համայնքներում արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրման աշխատանքներն արդեն սկսվել են, առաջիկայում նման համակարգի տեղադրում է նախատեսվում Կապան քաղաքում, որն այժմ պլանավորման փուլում է: Քննարկման փուլում են համայնքների ներկայացրած մի շարք այլ փոքր ենթակառուցվածքային ծրագրեր, ինչպիսիք են Մեղրի համայնքի Լեհվազ գյուղում և Տեղ գյուղում խմելու ջրի ջրամատակարարման համակարգի կառուցումը, Տեղ-Քարաշեն գյուղերը կապող ճանապարհի փողոցային լուսավորության համակարգի տեղադրումը, ինչպես նաև Խնձորեսկում գոյություն ունեցող ոռոգման համակարգի վրա փոքր հիդրոէլեկտրակայանի տեղադրումն ու Շաքի գյուղում վարչական շենքի և նոր մանկապարտեզի տարածքի վերանորոգումը:

Ծրագրերը նախատեսվում է իրականացնել առաջիկա երկու տարվա ընթացքում: Իսկ ընդհանրապես հինգ տարվա ընթացքում Ավստրիական զարգացման գործակալությունը Սյունիքում բիզնես միջավայրի բարելավման և մասնավոր հատվածի մրցունակության բարձրացման նպատակով կներդնի 11 միլիոն եվրո:

Նոյեմբերի 15-ին Սյունիքի մարզպետարանում եռակողմ հուշագիր է ստորագրվել Ավստրիական զարգացման գործակալության, վերոհիշյալ յոթ համայնքի ղեկավարների և ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի միջև: Արարողությանը մասնակցում էին Հայաստանում Ավստրիայի դեսպանության տեխնիկական համագործակցության համակարգող գրասենյակի ղեկավար Կլաուս Կապերը, Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, ծրագրի ղեկավար Յառեկ Զարիխտան:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**
**15.11.2024**

**ԿՈՐԵԼ Է** Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի «Արդյունաբերական էլեկտրոնիկա» մասնագիտության 1990 թ. շրջանավարտ Ալինա Կառլենի Շալունցի դիպլոմը՝ YB-1 N 091971, գրանցման համար՝ N 122: Համարել անվավեր:

# Միջոցառում՝ նվիրված ռազմաբժիշկներին և բուժծառայողներին

Այս տարի առաջին անգամ Սիսիան համայնքում կայացավ հանդիսավոր միջոցառում՝ նվիրված ռազմաբժիշկներին և բուժծառայողներին:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության պետ, բ/ծ գնդապետ Գեղամ Փաշիկյանը, ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության պետի տեղակալ, բ/ծ գնդապետ Գառնիկ Վարոյանը, ՀՀ ՊՆ ռազմաբժշկական ապահովման վարչության կազմակերպչական-պլանավորման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ, բ/ծ գնդապետ Էրիկ Պետրոսյանը, ՀՀ ՊՆ Զանգեզուրի կայազորային հոսպիտալի պետ, բ/ծ գնդապետ Դանիել Մկրտչյանը, ռազմական բժիշկներ, բուժծառայողներ:

Միջոցառմանը ներկա էին նաև Սիսիան համայնքի ղեկավար Հովսեփ Առաքելյանը և համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ:

Բուժծառայողները համայնքի ղեկավար Հովսեփ Առաքելյանի հետ այցելեցին Սիսիանի քաղաքային պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հայրենիքի պաշտպանության համար իրենց կյանքը զոհաբերած հայորդիների հիշատակին:

Միջոցառման ընթացքում մեծարանքի խոսքերի արժանացան բոլոր ռազմաբժիշկներն ու բուժծառայողները, իսկ որոշ բուժաշխատողներ Սիսիան համայնքի ղեկավար Հովսեփ Առաքելյանի կողմից պարգևատրվեցին պատվոգրերով:

**18.11.2024**

# Ֆրանսիայի Բրոն քաղաքում բացվեց «Մեղրի քաղաքի պուրակ»

Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանը նոյեմբերի 23-ին հանդիպում է ունեցել Բրոնի քաղաքապետ Ժերեմի Բրեոյի հետ:

Քույր քաղաքների միջև ստորագրվել է համապատասխան հռչակագիր՝ ևս մեկ անգամ հաստատելով երկկողմ հարաբերությունները:

Բրոնի քաղաքապետարանի հարակից տարածքում պուրակ բացվեց, որն անվանվեց «Մեղրի քաղաքի պուրակ»:

Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանը, Բրոնի քաղաքապետ Ժերեմի Բրեոն, Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը և Լիոնում Հայաստանի գլխավոր հյուպատոս Նարինե Նիկոլյանը հաստատելով երկու քաղաքների բարեկամությունը և ֆրանս-հայկական հարաբերությունները՝ նռնենի տնկեցին պուրակում:

**ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**
**25.11.2024**

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

**Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 28.11.2024թ.: